ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«13» դեկտեմբերի 2024թ. No 13/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍՈՒՍԱՆՆԱ ՉԵԼԻԿՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ ՊԵԿ- ԷԱՃԾՁԲ-2024/2-1
Մասնակից՝ «ՍՈՒՍԱՆՆԱ ՉԵԼԻԿՅԱՆ» ԱՁ
ՀՎՀՀ 25324335, գործունեության հասցե՝ ք. Երևան, Նաիրի Զարյան փ., 67բ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՈՒՍԱՆՆԱ ՉԵԼԻԿՅԱՆ» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կնքվել է թիվ ՀՀ ՊԵԿ- ԷԱՃԾՁԲ-2024/2-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «ՍՈՒՍԱՆՆԱ ՉԵԼԻԿՅԱՆ» ԱՁ-ն պարտավորվել էր մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ մատուցելու ուղևորափոխադրումների մասնագիտացված ծառայություններ:

Կատարողը դիմում է ներկայացրել Պատվիրատուին (Դ/63235-2024), որով տեղեկացրել է, որ 2024 թվականի նոյեմբերի 12-ից ծառայություն չի մատուցելու (հրաժարվել է ծառայություն մատուցելուց) և նշված օրվանից դադարեցրել ծառայությունների մատուցումը, որով Կատարողը էականորեն խախտել է Պայմանագրի պայմանները:

Պայամանգրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է եղել միակողմանի մասամբ լուծել Պայմանագիրը:

1. Եզրահանգում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում եմ՝ «ՍՈՒՍԱՆՆԱ ՉԵԼԻԿՅԱՆ» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ